ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2015թ-ի դեկտեմբերի 15-ին կնքված ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04-26 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2015թ-ի դեկտեմբերի 16-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ : Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրի N2 հավելված հանդիսացող Գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն,

Փոփոխության նկարագրություն: Ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգում:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 9.4 և 9.6 կետեր

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Խաչատրյանին:

Հեռախոս՝ 511 787:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
15.12.2015թ. ԼԱԶԵՐԱՅԻՆ ԵՎ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՏՊԻՉՆԵՐԻ ԳՆՄԱՆ N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04-26
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «16» դեկտեմբերի 2015թ.

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ԷՎՐԻԿՈՄՊ-ԹԵՔ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Գրիգորյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 15.12.2015թ. կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04-26 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 և 9.6 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի N2 հավելված հանդիսացող «ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում «Նախատեսվում է գնել 2015թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 16-ը ներառյալ» բառերը փոխարինել «Նախատեսվում է գնել 2015թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 21-ը ներառյալ» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«ԷՎՐԻԿՈՄՊ-ԹԵՔ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Տաշիր, Անտառային 41,
ՀՎՀՀ՝ 02583241	ք. Երևան, Վարդանանց 8
Հ/Հ՝ 900011192052	ՀՎՀՀ՝ 07203225
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ՝ 1150009387910100
	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Ղեկավար Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ս. Գրիգորյան
(ստորագրություն)	(ստորագրություն)